Ժ Գ.

Լըսէ՛, լըսելիք ունիս, ողորմէ՛, գէմ Աստուած ունիս:
Երբ այս անճարակ տեղիս դէմ չիգաս նա այլ չիպիտիս.
Ի յիմ կըրակէս տայ քեզ որ գիշերն ի քուն չիլինիս,
Ապա ի սրտէդ ի դուրս՝ սիրոյ տէր մարդուն ողորմիա:

Ժ Դ.

Ճըրա՛գ, քեզ երնեկ կուտամ, իմ եարին առջեւ կու վառիս.
Գէմ շատ մի ֆառահ է քո, իւր երեսն ի վեր կու նայիս:
Ճըրա՛գ, քեզ ականջ պիտէր, լըսէիր ըզիմ գանգատնիս,
Երթ՝իր իմ եարին աս՝իր, խըռով է՝ հաշտէր հետ ի յիս:

Ժ Ե.

Ճիըրա՛գ, քեզ երնեկ կուտամ, պահ մ՝երիս պահիկ մ՝անցանիս.
Արե՛կ ըզգերիս նայէ՛ որ անցաւ պատրոյգն ի լերդիս:
Ասի թէ հանեմ ըզնա, ցաւ կուտայ ինքն ի մէջ սրտիս.
Մակար զինքն ընդ յինք թողում, որ երի եւ սեւնայ կաշիս:

Ժ Զ.

Ելնես դուռն ի վեր կանգնիս, կու նայիս, կու պատռի լեղիս.
Ջուր առնուս ի տուն մտնուս, աշքարա հոգիս կը հանես.
Դարձի՛ր ի յետիդ նայէ՛, ղարակօ՛զ, գէմ Աստուած ունիս.
Որ այս անճարակ տեղիս դէմ չիգաս, նա այլ չիպիտի:

Ժ Է.

Ժամ ժամ կու ժողվեմ ես զիս, լօք համբեր կուտամ իմ սրտիս.
Սրտիկս ի յաշնան ղազար նըման է երբ ինձ կ՝երեւիս.
Կուլամ ես ի յիմ սրտիս, ծիծաղիմ վասն աստընւորիս.
Նա մէկ մ՝չասացիր գերուս թէ՝ Քո սէ՛րըն կայ իմ սրտիս:

Ժ Ը.

Երէկ է՞ր չելար եկիր՝ որ շունչս ու հոգիս էր ի յիս.
Այսօր ի՞նչ ելար ՝ւ եկիր որ թողեր է միս ըզմորթիս.
Ասի թէ կենամ ի հոս ու ծախեմ զիմ սէրն ալ ազիզ.
Երթամ ես ի մեր տեղըն, լա՛ւ աչեր, սրտովդ ուզէ՛ զիս:

Ժ Թ.

Իմ սիրտըս ճնճղուկ պիտէր, գար ի քեզ ու դառնայր ի յիս,